

նեղ և բնակիչներին կոտորել են այնպէս որ պ. Բոնէն նոյն տեղն այցելելիս միայն աւերակներ է տեսել և ոչ մի կենդանի հետք չի գտել։ Սա կարծում է, որ այդ հայերն անպատճառ հին գաղթականութեան մնացորդներ պէտք է լինին և ոչ պարսկա—հնդկական գաղթականութեան մի շառաւիղ, որովհետեւ նոքա կարող են այստեղ հասած լինել միայն այն միակ ծանապարհով, որով անցել են նեստորական քարոզիչները։ Հնդկաստանից այդտեղ գալ անհնարին էր—Հայերն ունեցել են ի միջի այլոց շատ հին ժամանակներում արգէն (Ը—ժիւ. դար), մի նշանաւոր վանք Ոստիկ—Կուլ լծի հիւսիսային կողմում, որ գտնուում է սուսական սահմանագլխի մօտ Այդ վանքում ըստ աւանդութեան պահուում էր Մաթթեոս առաքելայի մարմինը և այդտեղ հաստատուած քրիստոնէական առաքելութիւնն այն մեծ նշանակութիւնն ունի որ նա շփումն է յառաջ բերել քրիստոնէութեան և բուզղայականութեան մէջ և այդ շփման արդիւնքն եղել է լամայական կրօնը, որ էութեամբ նոյն բուզղայականութիւնը լինելով՝ բազմաթիւ ծէսեր և արարողութիւններ է փոխ առել քրիստոնէութիւնից։ Լամայական կրօնի ամբողջ արտաքինը այնչափ նման է քրիստոնէական եկեղեցւոյ, որ երբ այս կողմերն առաջին անգամ այցելած մի լաղաւրիստ կրօնաւոր իւր ծանապարհորդութիւնն ու ազատութիւնները մի գրքով միամտաբար նկարագրեց՝ նորա զիրքը արգելեալ զբոսքերի ցանկի մէջ անցաւ, որովհետեւ պապականները վախենում էին թէ հիթանոսական կրօնի այնչափ մեծ նմանութիւնը կաթոլիկ եկեղեցւոյ կարգերի հետ անտեղի կասկածներ կյարուցանէ։ Այժմ յայտնուում է ուրեմն, որ այդպիսի կասկածի տեղիք չկայ ամենեւին։ Բուզղայականութիւնն սկզբում ոչ մի ծէս չունէր՝ բառի բուն իմաստով կրօն իսկ չէր, այլ մի վերացական բարոյագիտական աշխարհայեցողութիւն, որ զանազան կրօնների հետ շփուելով՝ մի տեղ բազմաստուածեան միւս տեղ միաստուածեան կրօնի կերպարանք առաւ։ Լամայական կրօնի հիմնադիրը՝ բնիկ Տիրէթցի, լաւ հասկացել էր, որ բուզղայականութիւնը չի կարելի մատչելի անել ժողո-

վրդին առանց արտաքին կարգեր մտցնելու։ Նորա մէջ և ահա այդ կարգերը նա վերջրեց քրիստոնէութիւնից, որին ծանօթացել էր յիշեալ լծի մօտերը մի ծանապարհորդութեան միջոցին։ Հայոց վանքը ինչպէս և Միջին Ասիոյ քրիստոնէութեան գրեթէ ամբողջ կազմածը կործանուեցաւ և անյայտացաւ ամենայն հաւանականութեամբ Լէնկ—Թէմուրի աշխարհաւոր արշաւանքների ժամանակ։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՅ՝

Ծեմարանում լսարանական և դպրանոցական բաժինն աւարտողների դասերը վերջացան դատկի տօներին, առաջիններին միջոց տրուեցաւ մինչև մայիսի 1 աւարտական շարադրութիւն գրելու, յետոյ սկսուեցան քննութիւնները։ Միւսների քննութիւնն սկսուեցաւ ապրիլի 18-ին։ Մնացած դասարանների դասերը շարունակուում են մինչև մայիսի 13, այնուհետեւ քննութիւններ կլինին նաեւ այս դասարաններում այն առարկաներից, որոնց դասընթացն այդտեղ աւարտուում է։ Լսարաններում յունարէն և գերմաներէն լեզուներից ևս Միաժամանակ դասարանական քննութիւններ են կատարուում։ Զեւչի ներկայութեամբ տօներից ի վեր, ստորին դասարաններում։

Բերկրութեամբ սրտի նկատում ենք, որ Մայր Աթոռի Հոգեւոր Ծեմարանը աւելի ու աւելի զրաւում է լուսավոր հոյ հասարակութեան ուշադրութիւնը և վայելում նորա սէրը—մի մխիթարական երեւոյթ, որ առհասարակ է ամէն մի հասարակական հաստատութեան յարատեւութեան և յառաջադիմութեան։ Ներկայ ուսումն. շրջանում զեղեցիկ նուէրներ ստացաւ մասնաւորապէս Ծեմարանի մատենադարանը։

1. Իշխ. Կ. Բէհրութեանցից (Պետերբուրգ) 33 հատոր, գլխաւորապէս աստուածաբանական գրքեր։

2. Մեծ. պ. Գր. Ջանշեանցից (Մոսկուայ) փետրուար ամսին մօտ 200 անուն այլ և այլ գրքեր ու պարբերական հրատարակու-

Թիւններ հացերէն ուսերէն Ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով: Բացի սորանից բազմաթիւ լուսանկարներ և մի թանկագին փոքրիկ ժողովածու Братск. Помощь ժողովածուին մասնակցող հեղինակների ու նկարիչների ինքնագրերի (աւտոգրաֆ):

Երկրորդ անգամ յարգելի պ. Զանշեանն ուղարկել է սոյն մայիս ամսին մօտ 300 կտոր ընտիր դրքեր ուսերէն և անգլիերէն լեզուներով և մի շատ հարուստ ժողովածու լուսանկարների՝ Եւրոպայի զանազան քաղաքներում պահուող գեղարուեստական յիշատակարանների վերաբերեալ:

Ծննդարանի վարչութիւնը իւր սրտագին շնորհակալութիւնն է յայտնում նուիրատու պարոններին:

Ա Ջ Դ.

Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի հրամանաւ յայտնուում է ի դիտութիւն հասարակաց որ Ծննդարանում առաջիկայ ուսումնական շրջանի համար աշակերտաց ընդունելութիւն ամենեկին չի լինի:

ՏԱԺԿԱՆՅՔ.

Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ Թիֆլիզի պտտուաւոր վաճառական Գրիգոր Յակոբեան Բայեանդուբեանցը աղղիս Վեհափառ Հայրապետի 80-րդ Զատիկը շնորհաւորելու առթիւ յանձն է աւել այս տարուանից պատուարելու չորս որբեր Կարնոյ մօտ գտնուած Կարմիր Վանքի որբանոցում: Սրանց պահպանութեան թոշակը, ընդամենը տարեկան 200 ռ., պ. Բայեանդուբեանցը մինչև որբանոցի փակումը հասցնելու է Պետերբուրգի այն յարգելի հայ տիկնանց, որ խնամատար են յիշեալ որբանոցին: Երեք տարուց յետոյ նոյն գումարը պիտի տրուի Սանատրեան վարժարանին, ուր պ. Բայեանդուբեանցի անունով մի որբ պիտի է ուսանի: Բարերարի ցանկութիւնն է, որ Սանատրեան վարժարանի սան ընդունուի յիշեալ չորս որբերից մէկը՝ ամենից ընդունակը: Այս թոշակը Սանատրեան

վարժարանում պ. Գր. Բայեանդուբեանցի անունով մշտական պարձնելու համար՝ բարերարը առանձին մի կարգադրութեամբ պիտի ապահովի:

Էրզուրումէն կը գրեն. «Ռուսահայ Պ. Ծանշիէֆի շնորհի տեղական աղքատները այս Զատիկ առթիւ ալ զուրկ չմնացին մխիթարութենէ: Աղքատինամը՝ իր դրամական տագնապին պատճառաւ՝ վհատած էր պահ մը, տեսնելով որ չհաւուակ բռնն փափաքին ու ջանքերուն պիտի ստիպուէր այս տարի մերկ թողուլ գարեցական աղքատիկ երկսեռ ուսանողները: չկրնալով ըստ սովորութեան՝ անոնց զգեստ մատակարարել այս Զատիկուան առթիւ, Ահա ճիշդ այս ժամանակին էր որ Պ. Ծանշիէֆի նպաստն հասաւ Աղքատինամին, համբերութեան նոր դաս մը տալու և աղքատին յոյս ու մխիթարութիւն ներշնչելու: Այս նպաստն՝ որ 58 Օսմ. ոսկի է, ամբողջովին Աղքատինամին զրկուած է որ անոր մէկ մասովն զգեստ պատրաստել կուտայ 300 էն աւելի աղքատիկ երկսեռ ուսանողներու: և, ինչպէս կըսենք, անոր մնացորդն ալ պիտի յատկացնէ անօգնական կարօտ ընտանիքներու համար տան վարձագնի և հացագնի:»

— Վանայ Վարագայ վանքի որբանոցին միամեայ՝ 1899 Յունվ. 1 էն մինչև Դեկտ. վերջ նոյն տարուոյ, հասցիթի գումարը եղած է 144,232.30 դր., իսկ ծախուց գումարը 154,678.25 դր.: Որբանոցին՝ յաջորդ տարուոյ մէջ վճարելի պարտուց գումարն է 14,492.20 դր., իսկ յաջորդ տարուոյ մէջ գանձելի պահանջից գումարը՝ 2054.25 դր.: Ընդհանուր գումար ծախուց և հասուից 158,725.10 դր.:

— Զատիկական տօնին առթիւ ինչպէս Յունաց, նոյնպէս Հայոց Պատրիարքարանին 150 ոսկի շնորհեր է Վեհ. Սուրբանը:

— Սըվազի առաջնորդ Գեր. Տ. Պետրոս Արքեպիսկոպոս որ վերջերս Թոգատ կը գտնուէր, ժողովուրդին օգտակար նորութիւն մը մտածեր է տեղւոյն ազգ. վարժարանի սրահին մէջ հաստատելով կիրակնօրեայ քարոզչութիւններ՝ աշխարհականներու հողմէ: Տ. Պետրոս Սրբազան այդ քարոզներուն հոգը յանձնած է Պ. Միսաք Փանոսեանի, որ բաւականատեւն ատեն Արմաշու Դպրեմանքին մէջ աշակերտելէ և հօն կէս կրօնական, կէս աշխարհական լաւ ուսում մը ստանալէ ետքը իր ծննդավայրը՝ Թոգատ վերադարձած էր տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ ուսուցչական պաշտօն ստանձնելու համար: Այդ քարոզութեանց առաջին կիրակին պ. Միսաք Փանոսեան բացատրեց երեսը խաչանքելու սովորութիւնը, ըսելով թէ այդ սովորութիւնը նորամուտ բան մը չէ. ըսաւ թէ Ս. Բարսեղ Հայրապետ երեսը խաչ հանելու սովորութիւնը առաքե-